

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
Ե. ՓՈՐՈՍՍԵԱՆ

ՆԱՄԱԿ ԿԱՍ ՈՐ ԵՒ Է ԳՈՐԾՈՒՆ
ՊԵՏՐ Է ՈՒՂՂԵՆԻ ԱՌ
ՏԳՈՐԻՆ. ԱՐԴՄԱՆՈՅ ՄԱՐԿԻ
ԳԱԶԻՐԷ (խօսք ու խորհրդ)

E. TOROSSIAN
Directeur du journal arménien
ARCHAËLOUICE
LE CAIRE (EGYPTE)
Poste-estante

ԱՐՁԱՅԻՆ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՀԱՐԱՅ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՒԿՑՈՒՄ ՀԱՄԱՐ	
Տարեկան, ողջ դահլիճ. 60	
Վեցամսեայ » 35	
ՕՏԱՐ ԵՐԿՈՒՆԵՐ	
Տարեկան Ֆրանկ 20	
Վեցամսեայ » 12	

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԵԿ Է
ԵՒ ՔՂՔՕՏԱՐԻ ՄԱՌԲԸ
ԽՈՒՔԱԳՐՈՒՔԻԱՆԱ ՎՐԱՅ :

Խմբագրութեան ուղղուած գրութիւնք ԵՒ չեն սրուիր:

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ
Կանխիկ վճարելի են

ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ ԱՐ

Այլ քան զի նախ Ս. Ե. Բարսեղիայի ժողովրդական Գրագարան-Ընթերցարանի քառամսեայ տեղեկագիրը, զոր բարեկամ մը զրկած էր, կուզենք պղտիկ յետագարձ անկարկէ մը ետքը քննել այդ հաստատութեան տուած օգուտը: Մինչև հիմա ամէն անգամ որ պէտք ըլլար ժողովրդի կրթութեան հարցին վրայ խօսիլ ստիպուած էինք միշտ փաստերը օտարէն առնել: Բայց այս անգամ ուրախ ենք որ այդ հարցին կարեւորութիւնը ցուցնող փաստերը պիտի կրնանք նոյն իսկ մեր մէջէն առնել:

Եգիպտոսի հայութեան ճնշող մթնոլորտին մէջ առհասարակ մեր աչքերը միութարական ու ե կեանք, ու ե գործ տեսնելու վարժուած չեն, փաշաներու կամայականութիւններէն վարուած էնթրիկներ, թաղականի յոգնեցնող կռիւններ, պէյերու ու խաւականերու հիւանդ ուղեղներու գործունէութիւնը միայն կազմած են Եգիպտոսի ամբողջ հայկական կեանքը. իսկ երիտասարդութիւնը ու մէկ տեղ այնչափ թոյլ, այնչափ անկարող գտնուած է, որչափ այս երկրին մէջ: Վերջին կէս տարուան մէջ միայն օգեւորութեան նշաններ երեւնալ սկսան այս կեանքին մէջ ու Եգիպտական մեծ աղաներու դէմ վազմունեցաւ երիտասարդ ուժ մը. այս ուժը որ նոր պահանջներով հրապարակ ելլելու յանդէսնութիւնը ունեցած էր, ուշ կամ կանուխ պիտի ունենար նաև իր ճակատագրական բաղադրը ու պիտի մղէր այդ մենք աղաներու դասակարգը այն յիմարութիւններուն, որոնք մեզի ծանօթ են արդէն և որոնք շատ լաւ գիտենք թէ միշտ բազասական արդիւնքի կը հասնին առանց ու ե անիւր գործ մը չարդել կարենալու: Հասարակ ժողովրդին քաջանքները միշտ կռիւով միայն ստացուած են. երբ բարեփոխումը վերէն չի գար, կռիւի ձայները վարէն կը սկսին պոռալ:

Եգիպտոսը իր քաղաքական, նիւթական ոչ այնպէս հարակից մեծ առաւելութիւններովը հայ գաղթականութիւններու մէջ առաջին դիրքը կրնար գրաւել. իր ժողովրդի գործը լաւ ու հաստատուն հիմքով վրայ դնելու ջանքերը ամենէն աւելի Եգիպտոսի մէջ կրնային պարտաւոր հող մը գտնալ իրենց համար. բայց իրականու-

թիւնը հակառակը կը պարզէ: Գահիրէի ու Ալեքսանդրիայի մէջ այսօր նախակրթարաններ միայն ունինք. որքան որ ալ լաւ ձեռքերու մէջ ըլլան այդ հաստատութիւնները, մեր ուսուցիչները որքան որ ալ ջանք ընեն աշակերտներու կրթութեան համար իրենց շրջանաւարտները ազգին յանձնած ժամանակ սակայն չեն կրնար ըսել թէ անոնք բողբոջին պատրաստուած են կեանքի մը ցուցումին: Մեր գաղթականներու որը ու աղքատ զաւակները նախակրթարաններու մէջ չէ որ իրենց ապագան պիտի պատրաստեն ու շատ լաւ գիտենք թէ անոնց ինչ կեանք կը սպասէ վաղը երբ չընտնեն աւարտելով վարժարանէն դուրս ելլան: Այսօր Հայաստանի ամենայնեւն քաղաքն ալ ունի իր նախակրթարանը ու եթէ Եգիպտոսը ուզէ միեւնոյն մակարդակին վրայ մնալ, ուրեմն ո՛ր կը մնան ազատ ու միեւնոյն ժամանակ հարուստ երկրի առաւելութիւններէն քաղելիք օգուտները: Պարս Գառնիարքարանը վերջերս գաւառական որբանոցներու զրկած շրջաբերականին մէջ կը յայտարարէր արհեստներու ուժ առ աւելի. այդ շրջաբերականին Եգիպտոսի հայերն ալ պէտք ունին ու եթէ այդ նպատակին գործադրութեան համար մէջտեղ եղած զբառն է որ կը պահին, կրնան դիմել Պօլսոյ նպաստի յանձնաժողովին, անշուշտ արժանապատուութեան զգացումը իրենց մէջ սպաննելէ ետքը: Ոչ մէկը համար գաղտնիք է թէ Եգիպտոսի նիւթական կարողութիւնովը բարձրագոյն վարժարան-Արհեստանոց մը բանալը շատ դժուար գործ մը չէ. բայց ան աշխարհ թողականի կռիւներն ու ձրիակերներու վտրի խնդիրը աւելի կենսական են:

Ապագայ սերունդին համար նախակրթարաններով բաւականացած ենք, բայց ինչ ըրած ենք այն սերունդին համար որ վարժարանի երես չի տեսնելու դատապարտուած է, ինչ ըրած ենք այն զրկուածներու դատակարգին համար զոր գաղթականութիւնը նետած է մեր հայրենիքին հեռու անկիւններէն Եգիպտական հողը, մեր գործաւորներն ու արհեստաւորները հայրենիքի տառապանքին ու նիւթական անտանիքի դժուարութիւններու մէջ իսկ չեն մտնար կրթութեան սէրը. ինքնազարգացումի այս ձգտումը պէտք էր գահայնել, պահանջը մը գարձած էր աս, ու անհրաժեշտ էր

զրկանքի կեանքին մէջ մաշուող գաղթականներուն հանգիստի ու միութարութեան կրթիչ հանգրուան մը ստեղծել:

Ալեքսանդրիայի ժողովրդական Գրագարան-Ընթերցարանի հաստատութիւնը որ պահանջքին արդիւնքն էր Վու Նիմա որ քառամսեայ տեղեկագիրը պատրաստուած է վարիչ մարմին կողմէ՝ կը անսուի թէ գործը առած է իր արդիւնքը ու սպասուած յաջողութիւնը իրականացած է, Գրագարան-Ընթերցարանը շորս ամսուան ժամանակամիջոցին մէջ ունեցած է մտաւորապէս 35 անգլ. ոսկիի պիւլանէ մը, Գրագարան-Ընթերցարանը իր սրահին մէջ ժողովրդին տրամադրութեան տակ դրած է 26 լրագիր ու հանգէս: Ինչքա առնուցնելու մէջ առաջին տեղը կը բռնեն գործաւորները, յետոյ կուգան արհեստաւորներն, ճշգրտացականները, վերջիններուն մէջ են արդէն օրիորդներն ու ախիւնները (մէկ ախիւն ու երեք օրիորդ ընդամենը). բայց անշուշտ զարմանալի չէ սա, անոնցմէ աւելին պահանջելու միամտութիւնը շատ տղայական պիտի ըլլար:

Գալով կարդացուած գրքերուն, առաջին տեղը կը բռնեն վիպականները: Ընթերցող հասարակութիւնը այսօր ամենէն աւելի կը հետաքրքրուի այն գրքերով որոնց նիւթը հայութեան ներկայ կեանքէն առնուած է և կամ շատ նմանութիւն ունին անոր. Բաֆթին, Արովեանը, Մերենցը աւելի շատ կը կծրդացուին ժողովրդէն քան սիւէ գրական ճիւղը վերաբերեալ գրքերը: Բայց կարդացուած գրական ու գիտական գրքերու յիշիկն մէջ տարբերութիւնը շատ մեծ է. 800է աւելի գրական գրքերու քով գիտականները 44 հատ են միայն 18 հոգիի կողմէ կարդացուած. անշուշտ այս արդիւնքին շատ նպաստած են և այն պարագաները որ գիտութիւնը ժողովրդականացնող լաւ պատրաստուած գիրքերը շատ քիչ են մեր մէջ ու ընթերցող հասարակութիւնը աւելի զրկուած թեմա մը վարուած է քան գիտական:

Տեղեկագրէն առնուած այս մէկ քանի թիւերը և մասնաւոր տեղեկութիւններ կը ցուցնեն թէ Գրագարան-Ընթերցարանը լաւ յաջողութիւն մը ունեցած է արդէն ու ժողովրդին տուած է մեծ գիւրութիւն մը իր մտաւորական հորիզոնը ընդլայնելու համար: Այս գործով Ալեքսանդրիայիները կը մտնան ժողովրդային կրթութեան գոր-

ծին մէջ, կը մնայ զայն շարունակել: Եղած ջանքերը արժանի են ամէն քաջալերութեան ու Գրադարան-Ընթերցարանի վարչները իրաւունք ունին յուսալու որ կարող ձեռքեր, հեղինակներ ու հրատարակիչներ չի պիտի զլանան իրենց օգնութիւնները ապագայի աւելի մեծ յաջողութիւններ պատճառներու համար:

Յիւրիս 1 Փետր. 900 Թ. Ա.

ՍՈՍԿԱԼԻ ԳՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ ՄԻՔՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԻՍԻՆՍՈՐՍԱՐԱՆԻ ՄԷՋ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Իր աղաղակները աւելի փութացուցին անիշխանականին փախուստը, կառքին դռնակէն գլուխը դուրս հանեց, կառապանին քանի մը խօսք ըսաւ եւ վերջինը ուժգին խարազանեց ձիւրը եւ շուտով կառքը անյայտացաւ:

Տօքթէօնը տեսնելով որ այցելուն ձեռքէն կը փախչի, սկսաւ աւելի արագութեամբ վազել. իր հողաթափներէն մին ոտքէն ելաւ, բայց ասիկայ իր արագութիւնը չի պակսեցուց: Տեսնելով որ պարսպ կառք մը կ'անցնէր մէջը նետակեցաւ եւ շունչը հատած պտուաց, «Շիտա՛կ մտրակէ, քսան ֆրանք կայ քեզի եթէ սա փախչող մոխրագոյն պիտակախառն ձիով կառքին հասնիս»:

Անտարակոյս խենդեցած է, ըսաւ արտասուակից աչքերով Տիկին Ռու, ա՛խ այս սոսկալի թոյներուն վրայ կատարած փորձերը, անքուն գիշերները, չափազանց յոգնութիւնը զինքը հասցուցին այս վիճակին: Այս ժամուս հողաթափով, գլուխը բաց, գոգնոցով ֆարիզի փողոցներուն մէջ:

Ա՛յ չ'վարանացաւ, անապարանօք վրան գլուխը շտկեց, ներքնասենեակէն իր ամուսնոյն գլխարկը, վերարկուն եւ կօշիկները առաւ, ինք ալ փողոց նետակեցաւ. կառք մը կանչեց եւ կառապանին ըսաւ. «Շո՛ւտ, Սէն-Միշէլի ծառայի ուղղութեամբ քշէ՛, քսան ֆրանք կայ՝ եթէ հասնիս երկու կառքի որք ամենայն արագութեամբ իրարու ետեւէ կը վազեն եւ սրուն մէկուն մէջը պարօն մը կայ գլուխը բաց, ձերմակ գոգնոցով»:

Քիչ մը ետքը կը տեսնուէր որ երեք կառք սոսկալի արագութեամբ իրարու ետեւէ կը վազէին. անցորդները հայտնելով մէկզի կը կենային. կառապանները առանց «Մէկզի» պոռալու կ'ընթանային ծռուածուս փողոցներէ, լայն պողոտաներէ, առաջինը ջանալով իր հետքը կորսնցնել տալ միւսներուն:

Անիշխանականը կառքին մէկ անկիւնը կրծկտած նստած էր, ձեռքերը ծալած, մէկ ձեռքովը բռնած ապակեայ խողովակը որու մէջը ժահրաւորներուն եռալը զգալ կ'երեւար, որոնցմով բնաջինջ պիտի ընէր Բարիդը. աղմուկից եւ անհոգ Բարիդը: Այն պահուն վախու եւ միանգամայն յանդգնութեան զգացում մը ունէր, կը վախնար որ իր սոսկալի զիտաւորութիւնը գործադրելէ առաջ կը բռնուի, միանգամայն իր խղճմանը կը բողբէր իրեն դէմ, բայց իր խանդարորութեամբ ամէն բան լռեցուց: Ի՞նչ հռչակաւոր անիշխանական մը պիտի ըլլար, ի՞նչ արժէք պիտի ունենային Ռավաշոյները, Վէեանները, Հէն-րինները, Քաղիթիները իր քով, ո՞չ ինք որ անոնց համբաւին կը նախանձէր, ի՞նչ խնամքով ամէն բան պարտաւորած էր, նախատեսած էր, ինչպէ՛ս Տօքթէօն Ռուի վայրկեանական բացակայութենէն օգուտ քաղած էր, հիմա ալ իր անունը պիտի խօսէին անոնք՝ որք իր վրայ կը խնդային, որք զինքը կ'անարգէին, որք իւր ճարտասանական տքնաբանութիւններէն կը փախչէին՝ պիտի հակընային որ ինքը կարեւոր մէկն էր: Ի մա՛հ, ի մա՛հ բոլոր անոնք որոնք իրեն նախանձ եւ աստիճաններու պատճառած էին:

Ակնարկ մը նետեց կառքին դռնակէն, ո՞ր էր հիմա ինք, կ'երեւայ որ կառապանը հաստատակէն որոշած էր պարզելու շահելու եւ ձին ալ

լաւ տեսակէն էր, Սէն Լազար փողոցէն, արեւմտեան կայարանին ուղղութեամբ կը սուրար, հա՛ ունկ. ինքը անցնող դարձողներու բազմութեանը մէջ պիտի խառնուէր, որք գիշեր ցորեկ հոն կը վխտան. գլուխը դուրս հանեց բայց շուտով դարձաւ ներս քսեց, տօքթէօնին կառքը յիտուն մեթր հեռուէն իրենին կը հետեւէր:

«Երկու ուկի աւելի ունիս, եթէ սա ետեւնուս եկող կառքին հետագնաւ մէն ազատիս» պոռաց կառապանին: Խարազանը դարձաւ ուժգին ձաղկեց ձիուն կողերը, գնացքը աւելի արագացաւ եւ կառքը սկսաւ անկարգ սաստուտութեամբ տատանիլ:

Յանկարծ ուժգին կերպով բաղխեցաւ թրամուէր մը գոգնէ, մարդը հաւասարակշռութիւնը կորսնցուց եւ մեքենայարար սոսկալի խողովակը բռնած ձեռքը կառքին պատին տարաւ, ապակին բաղխուէն կորոցեցաւ եւ պարունակութեանը կէսը բարձին վրայ թափեցաւ:

«Անէ՛՛՛ք», ոռնաց անիշխանականը, ինքզինքը ետեւ նետելով, «պարտք տեղը կորսուցայ», եւ բաղրոնակին վրայ թափած քանի մը կաթիլ նետած հեղուկը զիտելով սարսափ, ո՛չ կիթէ մտադրուած տեղը հասնէին ատ կաթիլները որք միլիոնաւոր մարդկային արարածի մա՛հ կը պարունակէին ի՞նչ բաներ պիտի ըլլար:

Է՛հ ուրիմ, եթէ մահալճիւ դատաւոր մը չ'կրցայ ըլլալ գոնէ մարտիրոս մը ըլլամ, ըսաւ այնպէս կողկողանքով մը որ կարծես թէ ապագայ սերունդին առջեւ կեցած ըլլար: Եւ արագօրէն առանց ժամանակ ձգելու որ իր որոշումը պաղի, մէկ ումպով կիտակոտոր խողովակին մէջ մնացածը խմեց:

Ա՛յ անկէ ետքը բոլորովին անօգուտ կ'ըլլար տօքթէօնին հետագնաւ մէն խոյս տալը, Թեոմիլիս պանդուխտ առջեւ հրաման տուաւ կառապանին՝ կեցնելու եւ ինքը դուրս նետակեցաւ, ոտքը մայթին վրայ դրաւ չ'դրաւ զգաց որ գլուխը սոսկալի կերպով կը դառնար «Ի՞նչ անելի թոյն կը թափեն եղեր սա նստախոտի ժահրալից բուժումները» ըսաւ մտովի եւ ապա կառապանին խոստացած երեք ոսկին տալով դողդոցուն մարմինը կազի ձողի մը կ'անթնցուց, ձեռքերը կուրծքին վրայ ծալեց ու տօքթէօնի հասնելուն սպասեց պիտակցարար ինքզինքը զոհող մարդու մը վեհութեամբ:

Վերջինը հասաւ, աւելի կառքէն դուրս խոյացաւ քան թէ ցատկեց «Առաջա՛կ» դռնակէն արագութեամբ ձեռքովը կ'արագացաւ «Ի՞նչ անելի թոյն կը թափեն եղեր սա նստախոտի ժահրալից բուժումները» ըսաւ մտովի եւ ապա կառապանին խոստացած երեք ոսկին տալով դողդոցուն մարմինը կազի ձողի մը կ'անթնցուց, ձեռքերը կուրծքին վրայ ծալեց ու տօքթէօնի հասնելուն սպասեց պիտակցարար ինքզինքը զոհող մարդու մը վեհութեամբ:

«Կեցցէ՛ անիշխանականը, պոռաց միւսը, «Շատ ուշ կը հասնիք տօքթէօն, թէպէտեւ չկրցցի խողովակը իմ ուղղածիս պէս գործածել, բայց գոնէ ինքզինքս պատեցի, պարունակութիւնը խմեցի, ուրիշներ ինձմէ աւելի բաղդաւոր պիտի ըլլան, վեհ նպատակի մը համար կը մտնեմ»: «Ո՛հ Աստուած, որչա՛փ կը տառապիր», յարեց քիչ մը ետքը ցած ձայնով, անագորոյն ցաւին տակ ճնշուելով «Աղիքներս կրակներու մէջ են, կ'ըզգամ թէ ժամերս համբուած են»:

Տօքթէօնը աչքերը խոշոր խոշոր կը բարնա, կ'երեւար թէ իր կատաղութիւնը կը փոխուէր անորոշ ժպտի մը: Ի՞նչ, այդ համբաւաւոր դիտունին սիրտը արդեօք այդչափ կա՞րծ էր որ զթութիւնը անկէ բացակայ ըլլար, իրաւ այդ մարդը մեծ ոճրագործ մըն էր, նոյն իսկ ինքը բերնովը կը խոստովանէր, բայց ինչ որ ալ ըլլար մարդկային արարած մըն էր որ մտնելու վրայ էր:

«Խմեցիք հէ՛» հարցուց տօքթէօնը «հարկաւ սոսկալի խիթեր պիտի զգաք, բայց խոստովանեցէք թէ ձեր ձեռքովը փորած փոսերնուդ մէջը ինչկաք»:

«Ո՛հ Պարոն, մէկ կողմ ձգեցէք զիս ծաղրելը, եւ ըսէք թէ շատ պիտի չարարուի՞մ» մըրմնջեց անիշխանականը, հետզհետէ մոխիր կտրելով աստիկ սուր խիթերուն աղբեցութեանէն որք իր աղիքները կը գալարէին:

«Կարծանէ՞ք աւելի երկար, բարեկամս». պատասխանեց տօքթէօնը, եւ շիտակը ըսելով արժանի էք, թէեւ ինձի մեծ վնաս պատճառեցիք Եւրոպայի մէջ մէկ հատիկ բուժումս

ջնջելով, բայց ինչ է նէ կը ներեմ, կրցածիդ չափ շուտ Պոթօնի հիւանդանոցը փոխադրուեցէք, շատ հեռու. չէ ասկից եւ հոն ինձի աղէկ կը ճանչնան, իմ կողմէս դրկուած ըլլալիդ ըսէք, ես աւ իրիկւրնէ կը դրեմ»:

Եւ տօքթէօնը իր դեղեկոտ, ամօթահար ու զող ելած գողը իր կառքին մէջը հրեց, կառապանին դրամը վճարեց եւ պատուիրեց որ դէպ ի Պոթօնի հիւանդանոցը տանի. ձին իր գնացքը շարունակեց ու շուտով անյայտացաւ Բէրլինի ուղիքի բազմութեան մէջէն:

«Վաղ ատու հիւանդանոց կ'երթամ» ըսաւ մտովի տօքթէօնը «եւ բուժումիս տարրերը դարձնալ կը գտնեմ», ու ճիշդ ետ դառնալու պահուն իր կնոջը հետ դէմ առ դէմ գտնուեցաւ որ անութի տակը բռնած ունէր ամուսնոյն վերարկուն, կօշիկները եւ գլխարկը:

«Ո՛հ եղբայր բոլորովին թոցուցե՛ր ես, մա՛րդ» ըսաւ անոր «չե՛ս տեսնի որ բազմութիւնը քեզի պատանկ տեսնուուն՝ կը խոնուի կոր, ի՞նչ Բարիդը ամենէն յաճախուած լրիկին վրայ մարդու քարոզ կը կարդաս, չե՛ս խախտի գլուխը բաց, ձերմակ գոգնոցով եւ մէկ հողաթափով». եւ Տիկին Ռու արտորոք իր կառքին մէջ մղեց ամուսնին որ իր գրգռումէն սթափած էր եւ բոլորովին պապանձած:

Երբ որ ալ անխորհուրդ նայուածքներէ աղատեցան, տօքթէօն իր ձախող գոգնոցը հանեց, կօշիկները հազաւ եւ գլխարկը գլուխը դնելով խնդալ մըն է բրբուց:

Իր կնոջ մտատանջօրէն զինքը կը զիտէր «Որոշապէս հիւանդ է՞» կ'ըսէր ինքնիրեն, «Ի՞նչ բան քեզի ատանկ խնդացնել կուտայ սիրելիս» հարցուց էրկանը, «Կարծեմ թէ պատճառ մը չունիս»:

«Չունի՞մ մի» բացազանցեց տօքթէօնը «Ուրիշ ի՞նչ կուզես որ ունենայի, մտիկ բրէ ժամ, ան մարդը տեսա՞ր որ այնչափ մոլեկնօրէն հալածեցի, անիշխանական մըն էր: Մի սոսկար, անիշխանական մըն էր որ այս ատուս տունս եկած էր իմ մէկ քանի ժահրալից բուժումներս գործալու նպատակով, որպէսզի անով կարենար երկրիս վրայ տարածել այն սոսկալի համաճարակներէն մին որ միջին դարէն ի վեր շատ ճանչցուած են: Գիտե՛ս մէկ քանի վայրկեան դուրս ելայ քեզի հետ խօսելու համար, անդամը բացակայութենէս օգուտ քաղեց»:

«Ձիւ կը սոսկացնես բայց տակաւին յանկարծական գուարթութեանդ պատճառը չես ըսեր, սիրելիս» ըսաւ Տիկին Ռու:

«Կեցի՛ր, իրեն հետ հնտախոտի պապիլին վրայ խօսած ատենիս, հարցուց ինձի թէ ողջ բուժումներ ունէ՞ր. թէեւ չ'ունէի բայց պզտիկ շնորհաւ համար չէ չ'ըսի, որովհետեւ չէի ուզեր ալ որ կարծէր թէ կը վախնայի»:

«Ե՞տքը»:

«Ետքը ձեռքիս եկած առաջին խողովակը ցցուցի իրեն ճիշդ ալ Չամպեզի խիթիս (Colique de Zambese) համբաւաւոր միքրոպիս բուժումն էր, ան որոն համար, գիտե՛ս մտտերս Ակադէմիային կարեւոր հաղորդում մը ընելու միտք ունէի կատաղութիւնս եւ յուսահատութիւնս կը հասկնաս անշուշտ երբ իմ Եւրոպայի մէջ մէկ հատիկ բուժումս կը թայցնէր եւ որ մեծ դժուարութեամբ յաջողած էի ձեռք բերել, ա՛յ չափտի կրնայի վերակազմել: Կը հասկնաս խելակորոյս կերպով վազելուս պատճառը այդ թշուառականին ետեւէն, կը հասկնաս նոյնպէս թէ մէկէնիմէկ շատ ուրախացայ երբ որ կորսած խողովակս տեսնալուս իմացայ որ անգգամը մէջինը խմեց է, որովհետեւ խմելովը ինձի միջոցը կուտար դարձաւ իրմէն աննելու կորսուած կարծած պապիլինիս: Վստահ եղիր որ այս նոր Ափրիկեան միքրոպիս շատ տաժանիլի խիթեր յառաջ կը բերէ բայց մարդ չ'մտոցներ, ութը օրէն մեր մարդու կը կատարելապէս առողջացած հիւանդանոցէն պիտի ելլայ: Նախ պիտի երթամ իրմէն միքրոպիսերս պիտի ուզեմ եւ ապա ոստիկանութեան իմաց պիտի տամ որ պէս զի զինքը եւ մեզ իր բանագործչանքներէն պաշտպանին, չեմ յուսար որ այս մաքրագողը զինքը բռնէ»:

«Ինչ եւ է, փառք Աստուծոյ որ աժան խալտեցար» ըսաւ ան ատեն Տիկին Ռու ինքն ալ կարգին խնդալով «Կը յուսամ որ այս պատահարը քեզի իրատ պիտի ըլլայ եւ ասկէ ետքը զգոյշ

պիտի ըլլաւ ու հասնողին չպիտի ցուցադրես խո- ղովակներդ, պատիւներդ եւ ժահրերդ: Յիշէ՛ բարե- կամս որ իրաւ է թէ մէկ կողմէն մեզի կը պաշտ- պանէք այնպիսի վտանգներէն որոնց կնխարկուած էին մեր հայրերը, բայց միւս կողմէն ալ քեզի նման միջոցաբաններ մեզի ենթակայ կ'ընեն, այնպէս փորձանքներու որ մեր հայրերուն զխուռն եկած էջին:

—«Ի՛նչ փորձանքներ» հարցուց սօքթէօտը: —«Միջոցաբանական տարրագործարաններու միջոցաւ տարածուած փորձանքներ, թող Վի- էննայի ժանտախտը եւ այսօրուան գողութիւնը ձեզի պէսներուն խրատ մը ըլլայ որ խելքերնիդ դուրսնիդ ժողուէք:»

Տր. Տէ Պիւսիէն Թարգմ. Լեւոն

Ա Ն Է Ծ Ք

Ո՛ւր էր... համակ կրակ դարձած վանէի'... Բեզ բոցերովս այրէի'... Ու կընէի՛ լոյս մարմնիդ տաք տաք մոխիր. Այսպէս՝ դէթ մէջս հալուէի՛ր...:

Կամ դառնայի՛ եւ բոցակէզ արիզակ, Սուցնէի՛ դէմքդ ձերմակ. Ճառագայթներս չե՛շտ աչքերուդ նետէի՛ Լոյսն ու բոցը մարէի՛...:

Եւ կամ ախտ մը յամր ու մաշող ըլլայի՛, Կուրծքիդ տակ պիտի գամուէի՛... Տարիներով քեզ կրծէի՛ եւ անյազ Դարձնէի՛ քեզ կմախք...:

Երեսիդ վառ վարդերն թօշնած տեսնէի՛... Ու հաճոյքէս դողայի՛, Եւ կորուսած գեղ, հրրապոյր, պատիւ, յարգ Ա՛ր, ինչայի՛ր ոտքիս տակ...:

Ճակտիդ վրայ՝ վարսերուդ տեղ ուրբուն Իցի՛ւ իժերն դնեն բոյն... Ու տեսնէի՛ օձի՛ր կախուած գլխէդ վար Եւ սոսկումէ՛դ կարած քար...:

Արի՛ւն լայիր... ու միս մինակ, կրերուն Թափառէի՛ր օրն ՚ի բուն, Չունենայի՛ր բնաւ հոգի մ՛քեզ սիրող Եւ ոչ իսկ սիրտ մ՛գթացող...:

Շուրջ թափուր, իսպա՛ն լքուած քու խոնարհ Պաշտողներէդ անհամար, Ա՛ր տեսնէի՛ր անուռն հովուռն ու ծովուռն Եւ յիշէիր սէքս անհուն...:

Ու տեսնէի՛ քեզ, ամենէ՛ն մերժուած, Ինձմէ սակայն մի՛շտ սիրուած. Ուրիշներուն՝ հրէջ, ինձ հրեշտակ, Ա՛ր ըլլայի՛ր ի՛մս մինակ...:

Եւ մոռցուած ամենէ՛ն զիս սիրէի՛ր Ու ինձ միայն խօսէիր. Կեանքիս մռայլ գիշերն տեսնէ՛ր արշալոյս Ու երեսիս՝ ժպտէր յոյս...:

Ազէքսանդրիա ՄԱՌԻ

Քաղաքիս հանրածանօթ դպրոցակր, Տիկին Սօֆի Ազգապետեան, որ մի քանի օրերէ հետէ անկողնոյ կը ծառայէր՝ եւ վերջերս անուանակից տիկնոջ մը մահուան պատճառաւ անստոյգ տարածաշնութիւն- ներ հրապարակ ելած էին, մեր միջոցաւ կը փու- թայ ծանուցանել թէ՛ այլ եւս ինք կատարելապէս ապաքինած ըլլալով, պատրաստ է իրեն խնամոց պէտք ունեցող ազնիւ ազգայնոց զիմուսներուն գոհացում տալ:

ԻՐԱՆԻ ԴԱՇՆԱԿ (Օգագիօն)

Գերմանական ամենայարգի գործա- րաններու մէկէն ելած, Նոր և շնչիտ դաշնակ մը կը վաճառուի արժան գնով:

Չայն ունենալու փափաքող, ու գնի և այլնի մասին պէտք եղած տեղեկութիւնները ստանալ ուղղները՝ կրնան գիտնել «Արշա- լոյս» ի Խմբագրութեան: 2-3

179րդ. ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԷՏԻ ՖՕՆՍԻԷ ԷԺԻԲՍԻԷՆԻ 15 փետրուար 1900

Table with 4 columns: Ա. պարգև ֆրանք, Հետեւեալք 1000ական ֆր. կը շահին, 8,091, 44,165, 40,637, 44,783, 42,290, 64,132, 75,936, 98,375, 140,331, 146,910, 151,557, 152,349, 161,784, 169,737, 225,521, 261,820, 272,007, 281,381, 282,824, 313,724, 329,014, 344,232, 347,034, 351,262, 380,080

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՐԱՄԹ 16 Փետրուար 1900

Table with 6 columns: 2468, 3880, 4063, 7464, 6052, 499, 564, 1372, 1451, 2357, 2486, 2935, 3260, 4641, 4120, 4872, 4122, 6303, 6911, 7586, 8142, 8896, 9626, 9984, 9388, 9211, 9309

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատերազմական գործոց նախարարու- թեան Սուտանէ եկած վերջին լրոց նայելով, Սպիտակ Նեղոսին վերայ շոգենաւուց հա- մար նաւարկութիւնը դժուարին եղած է: Միայն Կապոյտ Նեղոսը նաւարկելի է 20 մղոնի չափ տեղ մը դէպ ի Խարդումի հիւ- սիսային կողմը:

— Պօլսէն եկած վերջին լուրեր կ'ըսեն թէ՛ այս օրերս Սուլթանը պիտի վաւերացնէ Աղեքսանդրիոյ Պատրիարք Ֆօթիուսի ան- ուանումը:

— Այս ամսոյ վերջերը Բրէնս Սայիա Բաշա Հալիմ Պօլսէն Գահիրէ պիտի վերա- դառնայ:

— Քաֆր-էլ-Չայնաթի յոյն գաղութը հանգանակութիւն մը բացաւ ի նպաստ Թրանսվալի պատերազմին զոհերուն. մինչև այժմ 50 ոսկի հաւաքուած է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԻՔԻԱ

— Մերսինէ լուր կը տրուի թէ՛ նոյն քաղքին քրիստոնէայ բնակչացը մէջ մեծ յուզում կը տիրէ. որովհետեւ յոյն-օրթո- սոքս եկեղեցւոյն պատկանող 12 տարեկան մանկամարդ աղջիկ մը գիշերանց յափշտա- կուած է միւսիւլմանի մը կողմանէ որ տունը տարած է: Ատանայի կուսակալը այս մասին քննութիւն մը բացած է, կը յուսացուի որ աղջիկը ետ յանձնուի:»

ԱՒՍՏՐԻԱ

Գերման «Նասիօնալիստ» ներք, իրենց գլուխը ունենալով Հէրման Ուօլֆ, Վիէն- նայի մէջ մեծ միթիւն մը կազմակերպելին իրենց համակրութիւնը արտայայտելու հա- մար Պօէրներուն 3000 է աւելի անձինք ներկայ էին, որոնց մէջ կը նշմարուէր Հո- լանտական դեսպանը իւր ընտանեօք:

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Սօֆիայի մէջ Աղեքսանդր Բ. Չարին ի յիշատակ արձան մը պիտի կանգնուի, որուն համար Պուլկարիոյ Իշխանը կը հրա- տիրէ բոլոր անդրիագործները. Այս յիշա- տակարանին գլխաւոր աւարկան բնականա- բար Աղեքսանդր Բ. ի մէկ արձանն է, բայց պիտի ուղուի որ Չարը չըջապատուի իւր շորս գլխաւոր աշխատակիցներէն — իւր Եղ- բայրը և Իկնաթիէֆ, Կուրքօ և Սքօպէլէֆ զօրավարները: Յիշատակարանը պիտի ու- նենայ հինգ քանդակներ որք պիտի ներ- կայացնեն Դանուբի անցքը, Բլէվնայի պա- շարումը, Շիքքայի պատերազմը, Սան-Սթէ- ֆանօյի դաշնագրութիւնը և վերջապէս Պուլկարիոյ Ազգային Ժողովոյն առաջին նիստը: Ուրուագիծը 1902, 19 Յունվարին կ'ուղուի, որ է Պուլկարիոյ անկախութեան քսան և հինգերորդ տարեդարձը. իսկ յի- շատակարանին բացումը 1905ին պիտի կա- տարուի: Մրցում բացուած է և հինգ պարգևներ խոստացուած 1000է 3000 ֆրան- քի: Պուլկարական կառավարութիւնը 300 հազար ֆրանքի գումար մը յատկացուցած է այս գործոյն:

— Մօնթէլիէի բժշկական վարժարանէն չըջանաւարտ և Սօֆիայի «Աղեքսանդր» հի- ւանդանոցին բժիշկը Տօքթ. Փօլոթովիչ, որ Ֆէրտինանտ իշխանին մօտ բացառիկ պա-

ԼԱ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՅ

ԿԵՆՍԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՃԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 1 ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահա- բաժինները: Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ՛ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է: Ս. ԼԵՈՆԱՐ Ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւն- ներ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ: ԱԼԼԻՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործ. Սպէքսանդրիա:

տիւ մը փայլէ, մօտ օրէն Բարիզ պիտի խրկուի իբրև Պոլիարիոյ դիւանագիտական գործակատար, իւր նախորդը Պ. Կէշօֆ ժամանակէ մը ի վեր Պոլիս փոխադրուած է:

ԳՆԱՐԱՅԱԿ

Պուս խորհրդական Միլիէր Չէթինէ ժամանեց: Յ.յս բարձր պաշտօնատարը Նիքօլա Բ. Չարին հրամանաւ խրկուած է իշխանապետութեան ելեմուտքը բարեկարգելու համար, որ մանաւանդ ժամանակէ մը ի վեր անձուկ վիճակի մէջ է:

ԱՄԵՐԻԿԱ

Յրանսական գետնայան Պ. Գամպօն, Մաք Քիլիի հետ տեսակցութիւն մը ունեցաւ երկու երկրաց առեւտրական դաշնակցութեան մասին:

— Ի Սէն-Լուի հրդեհ մը ծագեցան. եղած քնարը 2 միլիոն տոլարի կը հասնի:

ՀՐԱԻՔԻ ԱՉԴԵՐՈՒ

Մեզ եղած առաջարկութեան մը վրայ յանձն խորհրդ մեր «Անիքթոններ» անուն հրատարակութեան մէջ յաւելու մասնաւոր մի պրակ, ուր պիտի տպագրուին մինչև 10 օր մեզ առաջարկուած ամեն տեսակ ազգեր (ուէքլամ) յոյժ չափաւոր գնով:

Ուստի կը հրաւիրուին ամեն մեծ ու փոքր վաճառականներ, առեւտրական սներ, արհեստաւորներ, գեղարուեստաւորներ, բժիշկներ եւն. ելն. սալ մեզ ի հրատարակութիւն իրենց գործն ու տեղը յայտնող ազգեր:

Մեր գիրքն որ գեռ մամլոյ տակ է, ունի հարիւրաւոր բաժանորդներ թէ՛ ի Գահրէ և թէ՛ եգիպտական շատ քաղաքներ և գիւղեր. ու տպագրութիւնն աւարտելէ յետոյ պիտի տարածուի Ռուսիա, Ռումանիա, Պաւլարիա, Ամերիկա ու Եւրոպիոյ շատ մը քաղաքները: օրով եղած ազգաւարտութիւն գրքի կեանքին հետ տեսական պիտի լինին ամեն տեղի համար:

Փափաքողք կրնան անձամբ կամ գրով դիմել ստորագրելոյս Բարեգործական Ընկ. Սրճարանը, ամեն օր կէս օրէ յետոյ մինչ ի ժամ 12:

Մ. ՀԱՅՈՒՆԻ

ՏԵՐԻՏՐԻ ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

Ամերիկեան Առամտրոյժ

Ապրիլն Եւրե Բուպրի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեզժ ալեւաներ:

Կը դադարեցնէ վայրկեանայէս ալեւայի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերովն:


Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ալեւաներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ձրի դարմանում, ամէն օր կէսօրէ ետք ժամը 3—5:

Պ. ԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԳ
ՇՈՐԷ-ԱՊՏԻԿԱ-ԱՉԻՉ



Թէյի գործածութեան ընդհանրանալովն, թէյի հարշակն ևս նորացած է. որով թէյի առեւտրն վաճառականութիւնէ աւելի արուեստ մըն է որ միայն երկարատե և ճօխ առեւտրէ յառաջ եկած փորձառութեամբ կ'ստացուի:

Մեր սունն, որ արդէն հանրածանօթ է իր քսանամեայ գոյութեամբ և ընդարձակ գործառնութեամբ, այս տարի ևս իր մասնաւոր գործակալաց ձեռամբ գնած է բազմազան և մեծաքանակ ընտիր թէյեր ՉԻՆԱՍՏԱՆԻ, ՃՍՎԱՅԻ, ՍԷՅՆԻ և ՀՆԴԿԱՍՏԱՆԻ գլխաւոր արտադրիչներէն, որոցմէ արդէն հասած է մեզ. ինչպէս նաև ձըմեռուան եղանակի յարմար թէյեր, որոնք իրենց գերնտիր հոտաւէտութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գներու ՉՍՓԱՉԱՆՑ աժանութեամբ ալ ամեն քսակի դիրամտաչելի են:

Թէ Կ. Պօլսոյ և գաւառաց, և թէ օտար երկիրներու մէջ մեր պան ցոյց տրուած վտաահութիւնն կը քաջալերէ մեզ առաւել ևս յարիւ մեր սկզբունքին, որ է՝

Ուղղամտութիւն ԹԷՅԻՆՈՒ ՅԵՍԱԿԻ ԿՈՒՅԻ և ԳՈՑ մասին:

Մեծաքանակ թէ փոքրաքանակ մեզի եղած ԿԱՆԻՅԻ ԴՐԱՄՈՎ յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

17—50

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

ՏՔ. ՊԵՏՐՈՍ ՆԻԿՈՂԵՍՈՍ

Տոկուն և մարգարտաշար ալեւաներ ու առողջ լինտեր ունենալն ոչ միայն մարդուս գեղեցկութեան կը նպաստէ, այլ առողջ կարեանալ ապրելու առաջին պայմանն է: Տիրար Պետրոս Նիկողոսիմն, վկայեալ ատամնաբոյժ, որ երկար ատեն Բարիկու մէջ ատամնաբուժութեամբ զբաղած և արհեստին նորանոր կատարելութեանց խիստ մօտէն հետեւած է, այժմ քաղաքս վերադարձած և Էլզպէթի Չորանսէզ վաճառատան ճիշտ դիմացի արամիղդանին մէջ ատամնաբուժական աշխատանց մը հաստատած է, ուր ամեն օր պատրաստ է իրեն դիմողներն գոհացնել թէ արհեստին յաջողակութեան և թէ գներու յոյժ չափաւորութեան տեսակէսով:

Հինգշաբթի օրերն կէս օրէ վերջ ժամը 3էն 5 ձրի դարմանում:

Տպագրութիւն Ս. Ա. ԴԱՊՈՒԼԵԱՆ

ՀԱՅԿԱՉԵԱՆ ՓՈՒՈՐ

Օռօգի Պափ վաճառատան տօտեր, Կապե-Կլ-Պիտարի Երօս դիմացը

ԵԿԱԻՑՅ ԵՒ ԸՆԿ

ԵԿԱԻՑՅ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փնտրին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ և անխարդախ ալուրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱԻՑՅ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ դաղդիական, անգղիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմրցելի ըլլալու պայմանաւ:

ԵԿԱԻՑՅ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճ, թէյի և կաթի պարսիմաթներ և այլն:

ԵԿԱԻՑՅ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնը ամենայն ճշգրտութեամբ և փութով կը կատարուին: 30—50

ԿՈՊԷՌ ՊԷՆԼԵԱՆ

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ ԵՒ ԿԱՐՉԱՏՈՒՆ

Տաներից տարիներ շարունակ կարեւոր լուսանկարատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ ճշտեմտ և փորձառութիւն ստացած է:

Պօլսոյ մէջ Ապախիլլա եղբայր սան, ինչպէս և ուրի մշակի ծախսով տեսներու, քաղաքս մէջ վերջին անգամ էջ թէ՛ ճան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի վր կը հիմնէ Եվաթիի Եւրիա Կապիլ Օթէլ Շէֆէթի ճիւղը գիմարթիւ 3 արարթումներն երրորդ պարիք, ուր կը պատրաստէ շուսանկարներ, ինչպէս նա զոմը կուտիւն ի հարկին:

Ակրանսիոյ մասնակցութեան մ. բնաչով, որոնք երբէք չեն արժէր:

Գուհար, որ շուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով վիճարիւր:

Իւղաներկ և ջրաներկ պատկերներ, եւն:

Լուսանկարի և պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ուրբուտ, քեվիթիլմոն եւն:

Իրեն դիմող յաճախորդներն աննկ տուած շուսանկարներն հետ միեւնոյնն փոխաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մ'է:

Գիմեցէ՛ք և կատարելապէս դի՛ պիտի մնաք:

ՓՍՓԿԱԿԵՐԱՑ ԱՉՔԸ ԼՈՅՍ

ԼՕՐԱՆՓԱՃԻ ՕՆՆԻԿ

Որ Կ. Պօլսոյ Բերայի Հալիպ Չարքսիին մէջ ընտիր խմորեղէններ պատրաստելով հուշակ հանած է, այս անգամ Ապախիլի Պահականոցին գիմացի անկիւնը խանութ բացած է և կը պատրաստէ աեսակ տեսակ համեմատ քաղցրութիւնք խմորեղէնք ամենամաքուր և ընտիր իւզով:

Հոն դիմող յաճախորդներն իւրաքանչիւրը իրենց ճաշակին համեմատ գոհացում պիտի գտնեն:

Հարսանիքներու, երեկոյթներու և հրաւերներու համար պէտք եղած անուշեղէն—խմորեղէնները կը պատրաստէ գոհացնելու պայմանաւ և գիւրամտաչելի գներով: